

|                                                                                                                                                 |                                                     |                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                    |                        |                             |  |  |
|-------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|-----------------------------------------------------|--------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|------------------------|-----------------------------|--|--|
|                                                                   |                                                     | «ԱՄԵՐԻԱԲԱՆԿ» ՓԲԸ                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                   |                        | 11RBD PL 72-03-01           |  |  |
| Ֆիզիկական անձանց վարկավորման պայմաններ                                                                                                          |                                                     |                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                    |                        | Խմբագրություն 44            |  |  |
|                                                                                                                                                 |                                                     |                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                    |                        | Ուժի մեջ է՝ 15.06.2021թ.-ից |  |  |
| 7.5 Գույքով (այդ թվում՝ առարկայագույրի ոսկով, դրամական միջոցներով) ապահովված Օվերդրաֆտ Master Card Gold/VISA Gold,Այո Visa Gold քարտատեսակներով |                                                     |                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                    |                        |                             |  |  |
| Նպատակ                                                                                                                                          | Նպատակ                                              | Վճարումների իրականացում, կանխիկացում                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                               |                        |                             |  |  |
| Հաճախորդի անձնական տվյալներ                                                                                                                     | Հաճախորդի (համավարկառուի/երաշխավորի) տարիք          | 18-65 տարեկան, պայմանով, որ վարկային պայմանագրի ժամկետի ավարտին վարկառուի տարիքը չի գերազանցի 65 տարեկանը, գերազանցելու դեպքում վարկը տրամադրվում է համավարկառուի/երաշխավորի առկայությամբ, այս դեպքում որպես ընդունելի տարիք նույնպես ընդունվում է 18-65 տարեկանը, պայմանով, որ պայմանագրի ժամկետի ավարտին համավարկառուի/երաշխավորի տարիքը չի գերազանցի 65 տարեկանը:<br>Եթե վարկի պայմաններով սահմանված է պարտադիր համավարկառուի կամ երաշխավորության պահանջ (բացառությամբ OTI ցուցանիշի հաշվարկում ներառված եկամուտների առնվազն 70% տիրապետող անձանց համավարկառության կամ երաշխավորությունների), ապա ֆիզիկական անձ երաշխավորի կամ համավարկառուի համար որպես ընդունելի տարիք նույնպես սահմանվում է 18-65 տարեկան, պայմանով, որ պայմանագրի ժամկետի ավարտին համավարկառուի/երաշխավորի տարիքը չի գերազանցի 65 տարեկանը: |                        |                             |  |  |
|                                                                                                                                                 | Ռեզիդենտություն                                     | ՀՀ քաղաքացիություն ունեցող և չունեցող ՀՀ ռեզիդենտ ֆիզիկական անձինք                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                 |                        |                             |  |  |
| Վարկի պայմաններ                                                                                                                                 | Արժույթ                                             | ՀՀ դրամ                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                            | ԱՄՆ դոլար              | Եվրո                        |  |  |
|                                                                                                                                                 | Քարտի նվազագույն և առավելագույն վարկային սահմանաչափ | 1,500,000-7,500,000 ՀՀ դրամ                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                        | 5,000-15,000 ԱՄՆ դոլար | 5,000-15,000 Եվրո           |  |  |
|                                                                                                                                                 | Քարտի վարկային սահմանաչափի ավելացում                | 5,000 ՀՀ դրամ                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                      |                        |                             |  |  |
|                                                                                                                                                 | Ժամկետ (ամիս)                                       | Անժամկետ                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                           |                        |                             |  |  |
|                                                                                                                                                 | Տոկոսադրույք                                        | 16.5%                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                              | 13.5%                  | 11.5%                       |  |  |
|                                                                                                                                                 |                                                     | Հաճախորդի ցանկությամբ գույքի Ապահովագրությունը Բանկի կողմից իրականացնելու դեպքում տոկոսադրույքը ավելացվում է Բանկի կողմից սահմանված հետևյալ վերադիրների չափով՝<br>• Ավտոտրասպորտային միջոց 2.5<br>• Հիմնական միջոց 0.5<br>Անշարժ գույքի ապահովագրությունը հաճախորդի կողմից իրականացնելու դեպքում տոկոսադրույքը նվազեցվում է 0.05%՝ հաշվի առնելով ընդհանուր գրավային ապահովման մեջ յուրաքանչյուր գույքի տեսակի տեսակարար կշիռը:                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                     |                        |                             |  |  |
|                                                                                                                                                 |                                                     | Վարկի մարումների դիֆերենցված և խառը եղանակն ընտրելիս տոկոսադրույքը սահմանվում է +0.5%:                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                             |                        |                             |  |  |
|                                                                                                                                                 |                                                     | Վարկ / գրավ հարաբերակցության շեղման պարագայում տոկոսադրույքը սահմանվում է +0.5%:                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                   |                        |                             |  |  |
|                                                                                                                                                 |                                                     | Հաշվի առնելով հաճախորդի վարկային պատմությունը՝ կարող է սահմանվել ավելի բարձր տոկոսադրույք +0.5%:                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                   |                        |                             |  |  |
|                                                                                                                                                 |                                                     | Դրամական միջոցներով կամ Ամերիաբանկի կողմից թողարկված պարտատոմսերով ապահովված վարկերի դեպքում տոկոսադրույքը սահմանվում է.<br>- վարկի և գրավի նույն արժույթով լինելու դեպքում՝ գործող դրամական միջոց/պարտատոմսի տոկոսադրույք + 4%, բայց ոչ ավելի քան վերոնշյալ տոկոսադրույքները,<br>-վարկի և գրավի տարբեր արժույթով լինելու դեպքում՝ վերոնշյալ տոկոսադրույքները:                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                     |                        |                             |  |  |
|                                                                                                                                                 |                                                     | Վարկի գումարը 15մլն ՀՀ դրամը գերազանցելու դեպքում Հաճախորդի կողմից առանց վարկի վաղաժամկետ մարման վճարի տարբերակ նախընտրելիս վարկի տոկոսադրույքը սահմանվում է +2% (կիրառելի չէ դրամական միջոցով/պարտատոմսերով ապահովված վարկերի դեպքում):                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                           |                        |                             |  |  |
| Օվերդրաֆտի մարման եղանակ                                                                                                                        | Պարտադիր վճարման ենթակա գումար                      | Ամսական պարբերականությամբ մարվում է քաղվածքում արտացոլված օգտագործված գումարի 3%-ը, սակայն ոչ պակաս, քան 5,000 ՀՀ դրամ, 10 ԱՄՆ դոլար, 10 եվրո և մարման պահին կուտակված տոկոսագումարը:* կիրառելի չէ դրամական միջոցներով կամ պարտատոմսերով ապահովված կամ Premium և Partner հաճախորդներին տրամադրված վարկային քարտերի դեպքում                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                         |                        |                             |  |  |
|                                                                                                                                                 | Գրավադրվող գույքի նկարագրություն                    | Գրավի առարկա կարող է հանդիսանալ Բանկի համար ընդունելի անշարժ գույք, տրանսպորտային միջոց, ոսկով մետաղական հաշիվներ, դրամական միջոցներ, Ամերիաբանկի կողմից թողարկված պարտատոմսեր:                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                    |                        |                             |  |  |

|                                    |                                                                                                                                                                     |                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                               |
|------------------------------------|---------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|-------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|
| Ապահովվածություն                   | Վարկ/գրավ հարաբերակցության առավելագույն սահմանաչափ* (անշարժ գույքի, տրանսպորտային միջոցի և հիմնական միջոցի դեպքում որպես արժեք հիմք է ընդունվում լիկվիդային արժեքը) | Վարկի ապահովություն հանդիսացող գրավի առարկաների արժեքը ներառվում է վարկ/գրավ հարաբերակցության հաշվարկում հետևյալ առավելագույն սահմանաչափերով ըստ յուրաքանչյուր գրավատեսակի.<br>1. անշարժ գույք. Երևանում գտնվող գույքի համար՝ 70%, Երևանից դուրս գտնվող գույքի համար՝ 60%<br>2. տրանսպորտային միջոց՝ 60%<br>3. հիմնական միջոց՝ 40%, բայց ոչ ավելի քան ընդհանուր գրավի մեջ 30%-ը<br>4. ոսկու առարկայագուրկ մետաղական հաշիվ Ամերիաբանկում՝ 80%<br>5. դրամական միջոց Ամերիաբանկում/ Ամերիաբանկի կողմից թողարկված պարտատոմսեր, որից.<br>-նույն արժույթով դրամական միջոցներ/ պարտատոմսեր՝ 90%<br>-այլ արժույթով դրամական միջոցներ/ պարտատոմսեր՝ 70%                                |
|                                    | Գրավադրվող անշարժ գույքի գտնվելու վայրը                                                                                                                             | ՀՀ և ԼՂՀ մայրաքաղաքներ և մարզկենտրոններ, ինչպես նաև Արովյան, Էջմիածին, Ջրվեժ, Առինջ, Ձորաղբյուր, Ծաղկաձոր, Դիլիջան , Քաջարան և Ջերմուկ քաղաքներ:                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                              |
|                                    | Գրավադրվող տրանսպորտային միջոցի տարեթիվը                                                                                                                            | Արտասահմանյան արտադրության տրանսպորտային միջոցի արտադրության ժամկետը սահմանվում է առավելագույնը 12 տարի՝ բացառությամբ ռուսական, չինական և պարսկական արտադրության տրանսպորտային միջոցների, որոնց դեպքում արտադրության ժամկետը սահմանվում է առավելագույնը 8 տարի:                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                               |
